

կասկածելի դարձաւ և իր խօսքերուն հաւատք չըն-
ծայուեցաւ: Երեք տարի յետոյ, 1513ին, յաջողեցաւ
շարունակել իր ճամբան և հասնիլ Լիզպոն ու հոն
ներկայանալ Փորթուկալի Էմմանուէլ թագաւորին
(1495—1521), որ մեծամեծ պատիւներ ընծայեց հա-
յազգի դեսպանին: Կնքուեցաւ դաշնագիր մը (1515):
Մատթէոսի դիմումը մեծ ապաւորութիւն գործեց ոչ
միայն Փորթուկալի, այլ և բովանդակ եւրոպայի մէջ,
վասնզի այդ միջոցին ամենուն ուշադրութիւնը ուղ-
ղուած էր դէպի Արեւելք: Սուլթանը Պոլիսը գրա-
ւելէ վերջ տիրած էր հետզհետէ Սիւրիոյ, Եգիպտոսի
և Արաբիոյ, ահուսարսափի մատնելով եւրոպական
ազգերը, որոնց առեւտուրին կ'ապառնար այնքան վը-
տանգաւոր կերպով:

Էմմանուէլ կը խորհէր, թէ Հապէշիստան՝
իրր յենարան Կարմիր ծովի եզերքը՝ մեծ օգուտ կըր-
նար ունենալ պարենաւորելու համար իր նաւատոր-
միդը, եթէ ինք Թուրքիոյ հետ կռուելու պարտաւոր-
ւէր: Կ'ուզէր, հետեւաբար, հետաքրքրել եւրոպական
արքունիքները Մատթէոսի առաքելութեամբ մահի-
կին դէմ իր պայքարին համար. ուստի յանձնարարու-
թիւններով Հռոմ՝ Լեւոն Ժ. Պապին (1513—1521) զրկեց
զայն, որպէսզի լսէ ան սմբողջ քրիստոնէութիւնը
չահագրգռող այս խնդիրին մանրամասնութիւնները:

Մատթէոս, աւելի դիւրաւ հասնելու համար
իր նպատակին, յոյսեր ներշնչեց հապէշ եկեղեցին Հը-
ռոմի իշխանութեան ենթարկելու: Լեւոն Ժ. Պապը
նամակ մը տուաւ անոր, 1514 Հոկտ. 10 թուակա-
նով, ուղղուած Եթովպիոյ կայսեր՝ Դաւիթ Դ. ի և
անոր խնամակալուհիին:

Փորթուկալի թագաւորը կնքուելիք դաշնա-